

ՀԱՅ ԱԽՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻԻ ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԱՌԹԻԻ «ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ- ՎԱՃԱՌՔ»

Ամանորը եւ Ս. Ծնունդը ուրախութիւն եւ ցնծութիւն կ'ընծայեն բոլորիս սրտերուն ու հոգիներուն, մանաւանդ երբ միասնաբար համախմբուինք ու ձեռք-ձեռքի տալով ծնունդ տանք նոր յաջողութիւններու, ձեռքբերումներու, ի մասնաւորի Ս. Ծնունդի խորհրդաւոր իմաստը յայտնաբերելու մեր ջանքին մէջ սրտազին ջերմ զգացումներ արտայայտելով, որպէսզի գոհաբանութեամբ դիմաւորենք նոր տարին, ու ամենակալն Աստուծոյ շնորհակալութիւն յայտնենք Իր պարգեւած բազում շնորհներուն եւ բարիքներուն համար:



Ամանորի եւ Ս. Ծննդեան առթիւ, 2000 տարեշրջանէն սկսեալ գեղեցիկ սովորութիւն դարձած՝ ցուցահանդէս-վաճառքի նախաձեռնութիւնը, հակառակ Սուրիոյ ճգնաժամային վիճակին ու ներկայ տառապանքը, որ կ'ապրի Սուրիահայութիւնը այսօր, Աստուծոյ նախախնամութիւնը խնդրելով ու Իր առաջնորդութեամբ այս տարի եւս տեղի ունեցաւ Հայ Աւետարանական Բեթէլ Եկեղեցիի Տիկնանց

Վարչութեան կազմակերպութեամբ՝ 17-19 Նոյեմբեր, 2013-ին, եկեղեցիի Սողոմոնեան սրահէն ներս: Տիկնանց Վարչութեան ջանքով կազմակերպուած ցուցահանդէսի բացումը տեղի ունեցաւ Կիրակի 17 Նոյեմբեր, 2013-ի կէսօր ժամը 12:00-ին, Եկեղեցիի «Սողոմոնեան» սրահին մէջ:



Չուցահանդէսը պաշտօնապէս բացուած յայտարարեց Վերապատուելի Համայնքապետ Յարութին Սելիմեանը: Հոն ներկայ էին՝ Սուրիոյ Հայ Աւետարանական եկեղեցիներու հովիւներ, Հայ Աւետ. Կրթական Խորհուրդի անդամներ, Հայ Աւետ. Բեթէլ Երկրորդական Վարժարանի Տնօրէնութիւնն եւ ուսուցչակազմ, Հալէպի մշակութային միութիւններու եւ բարեսիրական հաստատութիւններու ներկայացուցիչներ եւ հիւրեր:

Վեր. Յարութին Սելիմեան, բարձր գնահատելով այս առթիւ կատարուած գնահատելի աշխատանքը, շնորհատրեց Բեթէլ եկեղեցիի Տիկնանց վարչութիւնը, որոնք իրենց վեհ առաքելութեամբ եւ ստեղծագործական կորովով կրցած են ստեղծագործել ձեռային

աշխատանքներ եւ պատրաստել համեղ ուտեստեղէններ. ապա շնորհակալութեան խօսք ուղղեց յարգարժան ներկաներուն, որոնք իրենց ներկայութեամբ քաջալերեցին Տիկնանց վարչութեան կազմակերպած տօնավաճառը: Ապա Վերապատուելի Համայնքապետը մատուց գոհարանական աղօթք:



Երեք օրեր ցուցահանդէսը ունեցաւ այցելուներ, որոնք հետաքրքրութեամբ շրջեցան գեղեցիկ ու յատուկ ոճով զարդարուած սեղաններուն ընդմէջէն ու գոհացումով ընտրեցին իրենց ճաշակը փայփայող զարդեղէններ ու ձեռայիններ:



Յատուկէն շնորհակալութեան եւ գնահատանքի խօսք՝ Տիկնանց վարչութեան անդամներուն եւ բոլոր անոնց, որոնք իրենց անվերապահ ու բոլորանուէր ծառայութիւնով ու մասնակցութիւնով սոյն նախաձեռնութիւնը վերածեցին օգտաշատ ձեռնարկի:

